ՀՀ ԿԳՄՍՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ԳԱՅԱՆԵ ԱԲԱՍՅԱՆԻ 2020Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏ ԱՄԻՍՆԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

- Լուսաբանել եմ ՀՀ ԿԳՄՍ նախարար Արայիկ Հարությունյանի և նախարարի տեղակալ Գրիշա Թամրազյանի մասնակցությամբ 4 միջոցառում՝ «Տարվա 10 լավագույն մարզիկներ» մրցույթի հաղթողների պարգևատրման արարողությունը, ըմբշամարտի Եվրոպայի առաջնության մրցանակակիրների ընդունելությունը ԿԳՄՍ նախարարությունում, նախարարի այցն Ալբերտ Ազարյանի անվան մարմնամարզության օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոց և ըմբիշ Հաջիմուրադ Գացալովի՝ որպես ազատ ոճի ըմբշամարտի Հայաստանի հավաքականի անդամ ներկայացնելու արարողությունը՝ Գրիշա Թամրազյանի մասնակցությամբ:
- Մասնակցել եմ «Տարվա 10 լավագույն մարզիկներ» մրցույթի հաղթողների պարգևատրման արարողության համար լրատվամիջոցների ներկայացուցիչների հավատարմագրման արարողությանը և միջոցառման ընթացքում ԶԼՄ ներկայացուցիչներին ապահովել անհրաժեշտ տեղեկատվությամբ:
- Հաշվետու ժամանակահատվածում մշտապես հետևել եմ պետական աջակցության ծրագրում ընդգրկված մարզական ֆեդերացիաների աշխատանքին, լուսաբանել ֆեդերացիաների կողմից Հայաստանում կազմակերպած առաջնությունները և Հայաստանը ներկայացնող մարզիկների մասնակցությամբ միջազգային մրցաշարերը:
- Նախարարության պաշտոնական կայքէջի (escs.am) և «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում նախարարության պաշտոնական էջի համար պատրաստել և տարածել եմ 39 տեղեկատվական բնույթ կրող նյութ:

- Մասնակցել եմ նախարարության Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության նախաձեռնած «Իմ մասնագիտությամբ #գործկա» շարքի ստեղծմանը ՝ այդ շրջանակում պատրաստելով 3 հրապարակում:

- Ըստ անհրաժեշտության՝ կատարել եմ նախարարության կայքէջի թարմացման, տեղեկատվությամբ համալրման աշխատանքներ:

- Հաշվետու ժամանակահատվածում մշտապես ուսումնասիրել եմ նախարարության սպորտային և երիտասարդական քաղաքականության վերաբերյալ ԶԼՄ-ներում և սոցիալական ցանցերում տեղ գտած հրապարակումները, անհրաժեշտության դեպքում զեկուցել վարչությանը՝ արձագանքման համար:
- Պատասխանել եմ լրատվամիջոցների ներկայացուցիչների՝ սպորտի ոլորտին առնչվող 9 հարցման (8՝ բանավոր, 1՝ գրավոր), անհրաժեշտության դեպքում ապահովել եմ լրատվամիջոցների և նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների կապը: Քաղաքացիներին հեռախոսով և էլեկտրոնային փոստով տրվել են սպորտի և երիտասարդության ոլորտներին վերաբերող բազմաբնույթ հարցերի պարզաբանումներ:
- Բացի այդ, մասնակցել եմ նախարարության տեղեկատվական քաղաքականության իրականացման աշխատանքներին, նոր ծրագրերի, նախագծերի վերաբերյալ ներկայացրել առաջարկություններ և կատարել այլ ընթացիկ աշխատանքներ:

Վարչության փորձագետ՝ Գայանե Աբասյան